



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 12- L

«05» Օգոստոսի 2022

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 55-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ


1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Նախադպրոցական վաղ մանկության տարիքի երկրորդ խմբի կրթական համալիր ծրագիրը» N 55-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM: 1909620211



Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2022 թվականի  
օգոստոսի 5-ի N 12-Լ հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2021 թվականի  
դեկտեմբերի 16-ի N 55-Լ հրամանի

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ  
(1-2 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)**

Ծրագիրը հասցեագրված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և ծնողներին: Այն կօգնի կանոնակարգված կազմակերպել 1-2 տարեկան սանի առօրյան նախադպրոցական ուսումնական հաստատությունում և տանը, հաջողությամբ իրականացնել Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորմանը միտված երեխայակենտրոն ուսուցման և դաստիարակության խնդիրները, ապահովել սանի առողջության պահպանման և ներդաշնակ զարգացման պայմանները, ՆՈՒՀ-ընտանիք համագործակցությունը:

**ԵՐԵՎԱՆ 2021թ.**

չափորոշի պահանջները և հիմնական դրույթները, միտված է սանի կարողունակությունների ձևավորմանը և սանի զարգացման ոլորտներով սահմանված կրթական վերջնարդյունքների ապահովմանը: Կրթական չափորոշի պահանջները իրականացնելու համար պետք է լավ պատկերացնել այս տարիքի երեխայի հոգեֆիզիոլոգիական զարգացման, առօրյայի (տանը և ՆՈՒՅ-ում) կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ուսումնադաստիարակաչական խնդիրները՝ ըստ պետական կրթական չափորոշչով սահմանված կրթական բնագավառների:

Կրթական ծրագրի բովանդակությունը ներկայացված է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով (ուղղություններով)՝

1) Խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում:

1-ից մինչև 2 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի խոսքի զարգացման և լեզվամտածողության, տրամաբանության, հոգեկան այլ գործընթացների զարգացմանը, զգայական դաստիարակությանը միտված աշխատանքները՝ հատուկ կազմակերպված պարապմունքների, սանի խաղային գործունեության և առօրյայի կազմակերպման ընթացքում:

2) Հուզականային և սոցիալ-անձնային զարգացում:

1-ից մինչև 2 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի՝ հասակակիցների և մեծահասակների հետ շփմանը, անձի և ինքնագիտակցության ձևավորմանը, հուզական զարգացմանը նպաստող գործունեության ձևերը, այդ թվում՝ գեղագիտական դաստիարակությունը՝ երաժշտության և գեղարվեստական գրականության, շրջակա միջավայրում գեղեցիկի հետ շփման միջոցով:

3) Շարժողական և ֆիզիկական զարգացում:

1-ից մինչև 2 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի շարժողական ակտիվությունը և ֆիզիկական զարգացումը ապահովող գործունեության ձևերը. մարմնամարզությունը, սպորտային և շարժական խաղերի տարրերը, կոփման արարողությունները, մանր և խոշոր մկանները զարգացնող խաղերը, զբոսանքները:

4) Աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում:

1-ից մինչև 2 տարեկանների համար այս բնագավառը ներառում է շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, առարկայական միջավայրում կողմնորոշումը, ինքնուրույնության, ինքնասպասարկման և անվտանգ կենսակերպի տարրական հմտությունների ձևավորումը գործունեության տարբեր ձևերում և առօրյայում:

5) Բարոյական, ազգային, Էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ.

1-ից մինչև 2 տարեկանների համար այս բնագավառը ներառում է մարդկային դրական փորձի, արժեհամակարգի, ինքնագիտակցության տարրական ընկալումների, մտածողության պարզ գործընթացների ձևավորմանը միտված և դաստիարակության տարրեր ապահովող գործունեության ձևերը:

Մեկից երկու տարեկանների կրթական հիմնական ծրագիրը հասցեագրված է ինչպես այս տարիքի երեխաների խնամքով և դաստիարակությամբ զբաղվող մասնագետներին, այնպես էլ՝ ծնողներին: Այն կօգնի, որպեսզի ուսումնական հաստատությունում և ընտանիքում երեխայի խնամքի, զարգացման, ուսուցման ու դաստիարակության խնդիրները իրականացվեն համատեղ աշխատանքի արդյունքում:

Այս տարիքը սանի արագ զարգացման շրջան է, որի պատասխանատուները և կազմակերպիչները ծնողները ու երեխայի հետ աշխատող մանկավարժներն են: Նրանց իրականացրած խնամքը, կազմակերպած զարգացնող խաղերը սանի ֆիզիկական, զգայական, իմացական և հուզական զարգացման կարևոր խթանիչներն են: Իր մասին հոգ տանող մեծահասակի օգնությամբ երեխան շփվում է շրջակա աշխարհի հետ, ընկալում է ձայներն ու հոտերը, լսում է հողաբաշխ խոսքը, լսում է երաժշտության հնչյունները, կատարում է նստելու և քայլելու առաջին փորձերը, ընկալում է հույզերը, ձեռք է բերում սոցիալական փոխհարաբերությունների առաջին փորձը:

Այս ծրագիրը ընդգրկում է մեկից երկու տարեկանների ուսուցման և դաստիարակության խնդիրները, սանի օրվա կազմակերպման կանոնակարգը, սաների հետ իրականացվող կրթական աշխատանքների բովանդակությունը, ըստ զարգացման ոլորտների՝ սանի զարգացման և կրթական վերջնարդյունքները:

Հաշվի առնելով 1-2 տարեկան երեխայի զարգացման առանձնահատկությունները՝ ծրագրի որոշ բաժիններ ներկայացված են երկու փուլով.

- 1–ից մինչև 1 տարեկան 6 ամսականը՝ առաջին ենթախումբ.
- 1 տարեկան 6 ամսականից մինչև 2 տարեկանը՝ երկրորդ ենթախումբ:

Հուսով ենք, որ ծրագիրը կօգնի ծնողներին և երեխաների դաստիարակությամբ զբաղվող մասնագետներին համատեղ ջանքերով հաջողությամբ իրականացնելու 1-2 տարեկանների զարգացման և կրթական խնդիրները:

## **2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ**

Ծրագրում ներկայացված են ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրները, ըստ զարգացման ոլորտների՝ վերջնարդյունքների ապահովման հիմքերը:

Ծրագրի նպատակն է՝

- ապահովել 1-2 տարեկանների զարգացման և կրթական գործընթացի արդյունավետ իրականացումը՝ նախադպրոցական կրթության սկզբունքների և չափորոշչային պահանջների հաշվառմամբ:

**Ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրներն են՝**

- 1-2 տարեկան սաների առողջության պահպանումն ու ամրապնդումը,
- 1-2 տարեկան սաների ֆիզիկական, հուզական, զգայական, իմացական ներդաշնակ զարգացման ապահովումը՝ ըստ զարգացման ոլորտներով սահմանված վերջնարդյունքների,
- 1-2 տարեկան սաների ինքնուրույնության, շրջակա միջավայրում կողմնորոշվելու, ինքնասպասարկման տարրական կարողությունների ձևավորումը,
- 1-2 տարեկան սաների խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորումը,
- 1-2 տարեկանների տարիքային առանձնահատկությունների և յուրաքանչյուր սանի առանձնահատկության հաշվառմամբ զարգացնող կրթական միջավայրի ստեղծումը,
- սաների ինքնուրույն, խաղային և ուսումնական գործունեության խնդիրների իրականացումը,
- յուրաքանչյուր սանի անհատական կարիքներին միտված ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և սաների զարգացման ընթացքի գնահատումը,
- սանի ինամքի, զարգացման և դաստիարակության հարցերում ընտանիքի և նախադպրոցական ուսումնական հաստատության միասնական մոտեցումների ապահովումը,
- օրվա կանոնակարգային պահանջների կատարումը,
- 1-2 տարեկան սաների կրթական գործընթացի բովանդակային սպասարկումը ապահովող մեթոդական նյութերի ստեղծումը:

Վաղ մանկության տարիքի երկրորդ խմբի կրթական հիմնական ծրագրով սահմանված խնդիրները հնարավորություն են տալիս հաջողությամբ իրականացնելու նաև ուսուցման և դաստիարակության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինամքը և կրթական գործընթացը:

Ծրագրի կառուցվածքը ներառում է ***Բացատրագիր, Ծրագրի կրթական նպատակը և խնդիրները, Սաների առօրյայի կազմակերպումը, Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը՝ ըստ զարգացման ոլորտների. շարժողական ոլորտ (վերջնարդյունքները), խոսքի և հաղորդակցական ոլորտ (վերջնարդյունքները), հուզական և սոցիալ-անձնային զարգացման ոլորտ (վերջնարդյունքները), իմացական ոլորտ (վերջնարդյունքները),***

**ինքնասպասարկման, անվտանգության և առողջ ապրելակերպի ոլորտ (վերջնարդյունքները) և Չարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները բաժինները:**

## ՄԵԿԻՑ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կյանքի երկրորդ տարվա երեխաները՝ ըստ հոգեֆիզիոլոգիական բնութագրերի և հնարավորությունների, բաժանվում են երկու ենթախմբի. առաջինը՝ 1 տարեկանից մինչև 1 տարեկան 6 ամսական, երկրորդը՝ 1 տարի 6 ամսականից մինչև 2 տարեկան:

Հաշվի առնելով ակտիվ արթնության առավելագույն տևողությունը և ապահովելով քնի անհրաժեշտ տևողությունը՝ յուրաքանչյուր տարիքային ենթախմբի սաներին խորհուրդ է տրվում ունենալ իրենց օրվա կանոնակարգը: Առաջին ենթախմբի սաները օրվա ընթացքում քնում են երկու անգամ, իսկ 1 տարեկան 6 ամսականից տեղափոխվում են մեկ ցերեկային քնի: Երեխայի գիշերային քունը տեւում է 10-11 ժամ:

Օրվա կանոնակարգը նախագծված է այնպես, որ հնարավորության դեպքում առանձնացնեն յուրաքանչյուր ենթախմբի արթուն մնալու և քնի ժամանակը (երբ առաջին ենթախմբի երեխաները քնած են, երկրորդ ենթախմբի սաները արթուն են և՛ հակառակը): Միաժամանակ արթուն սաների փոքր թիվը թույլ է տալիս ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխային, ավելի հաճախ շփվել նրա հետ, վերահսկել նրա վիճակը, վարքը, տրամադրությունը և աշխատել սաների հետ՝ հաշվի առնելով նրանց անհատական և հոգեբանական առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր տարիքային ենթախմբի համար մշակվել է օրվա կանոնակարգ՝ ցուրտ և տաք եղանակների համար:

Տարվա ցուրտ եղանակին երեխաների առօրյան կազմակերպել խմբասենյակում, զբոսանքը՝ ՆՈՒՀ –ում և երեկոյան ժամերին (ծնողների հետ):

Օրվա կանոնակարգով նախատեսված միջոցառումները՝ սաների խնամքը, հիգիենան, սնունդը, քունը կազմակերպել դաստիարակի օգնականի օգնությամբ: Սանի ինքնուրույն գործունեությունը և խաղ-պարապմունքները կազմակերպել փոքր խմբերով:

Տաք եղանակին սաների առօրյա մեծ մասը կազմակերպել բակում՝ կանաչ տարածքում, առողջարարական և կոփիչ միջոցառումների ընթացակարգերով:

**ՏԱՐՎԱ ՑՈՒՐՏ ԵՂԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Տարիքային խումբ 1-2 տարեկան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	1 տար.-1տար 6 ամս.  Առաջին ենթախումբ	1 տերար. 6 ամս.-2 տար.  Երկրորդ ենթախումբ
Տանը		
Արթնացում, խնամք հարդարանք	06:30 - 08:30	06:30 - 08:30
ՆՈՒՅ-ում		
Երեխաների ընդունելություն, առողջական վիճակի ստուգում, խաղեր	08:30 - 09:00	08:30 - 09:00
Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	09:00 - 09:30	09:00 - 09:30
Ինքնուրույն գործունեություն , ազատ խաղեր	09:30 - 10:00	09:30 - 10:00
Խաղ-պարապմունք 1 (ըստ ենթախմբերի)	10:00 - 10:05, 10:07	10:00 - 10:10
Ինքնուրույն գործունեություն, ազատ խաղեր	//----//	10:10 - 10:20
Խաղ-պարապմունք2 (ենթախմբերով)	//----//	10:20 -10:30
Քնի նախապատրաստում,  1-ին քուն	10:07 – 11:30	//----//
Նախապատրաստում զբոսանքի, զբոսանք	//----//	10:30 - 11:30



Վերադարձ զբոսանքից, խաղեր	//----//	11:30-12:00
Աստիճանական վերկաց	11:30 - 12:00	//----//
Ճաշի նախապատրաստում, ճաշ	12:00 - 12:30	12:00 -12:30
Քնի նախապատրաստում, ցերեկային քուն	//----//	12:30 -15:00
Ինքնուրույն գործունեություն, խաղեր	12:00 -13:00	//----//
Խաղ- պարապմունք 2 (ենթախմբերով)	13:00 - 13:07	//----//
Նախապատրաստում զբոսանքի, զբոսանք	13:07 - 14:30	//----//
Աստիճանական վերկաց	//----//	15:00 -15.30
Վերադարձ զբոսանքից, խաղ	14:30 - 15:00	
Ջետճաշիկ	15:00 -15:20	15:30 -16:00
Քնի նախապատրաստում 2-րդ ցերեկային քուն	15 :20 - 16.30	//----//
Աստիճանաբար վերկաց, հետճաշիկ	16:30-17:00	//----//
Ինքնուրույն գործունեություն վերադարձ տուն	17:00-17:30	17:00 -17:30

**Տակը**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b>	1 տար.- 1տար 6	<b>1 տար. 6 ամս.-2 տար.</b>
	ամս.	

Նախապատրաստվել ընթրիքի, երեկոյան ընթրիք	17:30-18:30	17:30-18:30
Ինքնուրույն գործունեություն ,	18.30 19:00	18.30 19:00
Չբոսանք վերադարձ զբոսանքից, հանգիստ խաղեր,	19:00-20:00	19:00-20:00
Հիգիենայի ընթացակարգեր	20.00-20.30	20:00-20:30
Պատրաստվել քնի, գիշերային քուն	20.30-06.30	20:30-06:30
	( 7.30 )	( 7.30 )

**ՏԱՐՎԱ ՏԱՔ ԵՂԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Տարիքային խումբ 1-2 տարեկան**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>Առաջին ենթախումբ</b>	<b>Երկրորդ ենթախումբ</b>
Տանը		
Արթնացում, խնամք հարդարանք	06:30 - 08:30	06:30 - 08:30
ՆՈՒՅ-ում		
Երեխաների ընդունելություն, առողջական վիճակի ստուգում, խաղեր	08:30 - 09:30	08:30 - 09:30
Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	09:00 - 09:30	09:30 - 10:00
<b>Ինքնուրույն գործունեություն, խաղ</b>	09:30 - 10:00	<b>10:00-10:20</b>
Խաղ-պարապմունք	10:00 - 10:10	<b>10:20-10:30</b>
<b>Չբոսանք, վերադարձ</b>	<b>10:20-11:30</b>	<b>10:30-11:30</b>

<b>զբոսանքից, կոփում</b>		
Ճաշի նախապատրաստում, ճաշ	<b>11:30-12:00</b>	<b>11:30-12:00</b>
Քնի նախապատրաստում, քուն	<b>12:00 -15:00</b>	<b>12:00 -15:00</b>
<b>Աստիճանաբար վերկաց,</b>	<b>15:00 -15:20</b>	<b>15:00 -15:20</b>
<b>Չետճաշիկի նախապատրաստվում, հետճաշիկ</b>	<b>15.20 - 15:40</b>	<b>15.20 - 15:40</b>
Ինքնուրույն գործունեություն	<b>15.40 – 17:00</b>	<b>15.40 - 17:00</b>
Վերադարձ տուն	<b>17.00 – 17:30</b>	<b>17.00 - 17:30</b>

**Տանը**

<b>ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>Առաջին ենթախումբ</b>	<b>Երկրորդ ենթախումբ</b>
Նախապատրաստվել ընթրիքի, երեկոյան ընթրիք	17:30-18:30	17:30-18:30
Ինքնուրույն գործունեություն	18.30 19:00	18.30 19:00
Չբոսանք, վերադարձ զբոսանքից, հանգիստ խաղեր,	19:00-20:00	19:00-20:00
Չիզիենայի ընթացակարգեր	20.00-20.30	20:00-20:30
Պատրաստվել քնի, գիշերային քուն	20.30-06.30	20:30-06:30
	( 7.30 )	( 7.30 )

**Նշում.** Սանի տեղափոխումը երկրորդ ենթախմբի կանոնակարգի իրականացվում է աստիճանաբար:

Օրվա կանոնակարգը կարող է փոփոխվել մանկավարժական խորհրդի որոշմամբ և տնօրենի հրամանի հաստատմամբ:

**Ջնգօրյա շաբաթվա խաղ-պարապմունքների ցանկ**

Երեխաների մտավոր զարգացմանն են ուղղված հատուկ կազմակերպված խաղ-պարապմունքները, որոնց ընթացքում երեխաները սովորում են լսել և դիտել մեծահասակին (դաստիարակին), ընկալել նրա խոսքն ու գործողությունները, կատարել առաջադրանքները:

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի մեկին և ավարտվում է օգոստոսի երեսունմեկին:

Կյանքի երկրորդ տարում յուրաքանչյուր ենթախմբի հետ անցկացվում է շաբաթական երեք օր երկուական պարապմունք, երկու օր՝ մեկական պարապմունք:

Առաջին ենթախմբի երեխաների հետ խաղ-պարապմունքներից առաջինը անցկացվում է օրվա առաջին կեսին, իսկ երկրորդը՝ օրվա երկրորդ կեսին: Երկրորդ ենթախմբի երեխաների հետ՝ երկու անգամ, առավոտյան ժամերին:

1 ից - 1 տարեկան 6 ամսական սաների հետ խաղ-պարապմունքներն անցկացվում են 5-7 հոգանոց խմբով, տևողությունը՝ 5-7 րոպե է:

1,6 ից - 2 տարեկան երեխաները կարող են միավորել 8-10 հոգանոց խմբով՝ կախված գործունեության բնույթից: Պարապմունքի տևողությունը 7-10 րոպե է:

<b>խաղ- պարապմունքի տեսակը</b>	<b>քանակը</b>
Ինձ շրջապատող աշխարհը և խոսքի զարգացում	<b>3</b>
Ֆիզկուլտուրա	<b>2</b>
Կառուցողական խաղեր	<b>1</b>
Երաժշտություն	<b>2</b>

**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
**ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՈԼՈՐՏ**

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում 1-2 տարեկան սանի շարժողական ակտիվությունը, ֆիզիկական զարգացումը և առողջությունը ապահովելու համար պետք է իրականացվեն հետևյալ կրթական խնդիրները՝

- առողջության ամրապնդում ու պահպանում, օրգանիզմի կոփում և դիմադրողականության բարձրացում, հենաշարժողական ապարատի ամրապնդում, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավում,
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայլք, ցատկ, սողանցում, մագլցում, նետում/ ձևավորում, ինչպես նաև՝ դրանց տեխնիկայի ճիշտ կատարում,
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, մկանային ուժի, հավասարակշռության / մշակում,
- շարժախաղերի և մարզախաղերի տարրերի ուսուցում, խաղային գործողությունների ձևավորում, զարգացում,
- շնչառական և մանր մկանների զարգացում,
- առողջ ապրելակերպի սովորությունների և վարքի ձևավորում,
- ինքնուրունության, ակտիվության, համագործակցության տարրերի դաստիարակում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը պայմանավորված է սաների առողջական վիճակով, նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանեկան-կենցաղային պայմաններով, սեռային, անհատական և տարիքային առանձնահատկություններով:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծման գործում էական նշանակություն ունեն նախադպրոցական ուսումնական հաստատությունում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, երեխաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրարականացվում են ռեժիմի, սննդի ճիշտ կազմակերպման, կուլտուր-հիգիենիկ ունակությունների, շարժողական հմտությունների ձևավորման, ինչպես նաև՝ կոփման միջոցառումների փոխկապակցվածությամբ:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են հիմնականում շարժողական նպատակային գործունեության պայմաններում, որի հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող ֆիզկուլտուրային ամենօրյա միջոցառումները, սանի ազատ, ինքնուրույն շարժողական գործողությունը:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և վարժություններ տարբեր առարկաներով: Համաձայն ծրագրի՝ օրվա ընթացքում շարժողական ռեժիմը ապահովվում է մարմնամարզական վարժությունների և երաժշտառիթմիկ պարապմունքների միջոցով, ըստ որի առաջադրվող նյութը բովանդակում է սպորտային վարժությունների պարզ ձևեր, նմանողական շարժումներ, ազգային պարային շարժումների տարրեր և այլն:

Շարժողական կարողությունների զարգացման համար վարժություններն ընտրվում են հաշվի առնելով սաների անհատական և տարիքային հնարավորությունները, պարապմունքների և առօրյա աշխատանքների կազմակերպման համար մանկապարտեզում ստեղծված պայմանները:

Ծրագրով առաջարկվում է ամեն օր կատարել առավոտյան մարմնամարզություն, որի համալիրները պետք է կազմված լինեն ծանոթ, պարզ, մատչելի, դինամիկ, ուշադրությունը կենտրոնացնող, զարգացնող, նմանողական խաղային վարժություններից և պարային շարժումներից:

Ցերեկային քնից հետո սաներին արթնացնելու, օրգանիզմը թարմացնելու, ակտիվ գործունեության նախապատրաստելու նպատակով առաջարկվում է ամեն օր անցկացնել մարմնամարզական վարժություններ՝ սաներին ծանոթ խաղ վարժություններից, պարային շարժումներից, որոնք զուգակցվում են օդային լողանքով (տևողությունը՝ 10-15 րոպե):

Շարժողական ռեժիմում սաների ինքնուրույն շարժողական գործունեությանը նույնպես մեծ տեղ է հատկացված: Սանն ազատ ընտրում է իր նախասիրություններին համապատասխանող գործողություններ: Նրա ինքնուրույն շարժողական գործունեությունը պայմանավորված է ակտիվությունը խթանող բազմազան պարագաների առկայությամբ բակում և շենքի ներսում: Առաջարկվում է լայնորեն օգտագործել ծանոթ, ժողովրդական շարժախաղեր, մարզական տարրերով խաղեր ու սպորտային վարժություններ:

## **1–ից մինչև 2 տարեկանների ֆիզիկական զարգացումը**

**Խնդիրները:** Նպաստել երեխաների հիմնական շարժումների բնական ձևերի հետագա զարգացմանը: Սովորեցնել քայլել հավասարաչափ քայլքով՝ մեկ ուղղությամբ՝ պահպանելով հավասարակշռությունը, զարգացնել մագլցելու (սովորեցնել ինքնուրույն բարձրանալ սանդուղքով և իջնել) և զցելու շարժումները (հրել- նետել և ոչ թե զցել

առարկան, նետելուց առաջ թափ առնել): Չարգացնել մատների մկաները:

Մեկ տարեկանից մինչև մեկ տարեկան 6 ամսական երեխաներին  
**հանձնարարվում է՝**

*Քայք և հավասարակշռության վարժություններ՝* քայլել ուղիղ գծով, քայլել հատակի տախտակի ուղեգորգի վրայով: Բարձրանալ մի ծայրով հարակից 10 - 15 սմ բարձրությամբ տախտակի վրա (լայնությունը 25 սմ, երկարությունը 1,5 - 2 մ) և իջնել: Մտնել շրջված արկղի մեջ (10 սմ բարձրությամբ) և դուրս գալ նրա միջից: Անցնել հատակին դրված և ապա հատակից 5 - 10 սմ բարձրացած պարանի կամ փայտիկի վրայով:

*Սողացնելու և մագլցելու վարժություններ.* սողացնել առաջադրված տարածությունը: Սողացնել ուղղահայաց դրված օղակի միջով, նստարանի տակով:

Մագլցել մեկ մետր բարձրություն ունեցող սանդուղքի վրա և իջնել:

*Գցելու, նետելու և գլորելու վարժություններ:* Գնդակը գլորել դեպի առաջ կամ դաստիարակին: Նետել գնդակը ներքև, հեռու:

*Մեկ տարի վեց ամսականից մինչև 2 տարեկան.* քայք, հավասարակշռության վարժություններ՝ քայլել, անցնել հատակից մեկ ծայրը 15 - 20 սմ բարձրացրած տախտակի վրայով (լայնությունը 20 - 25 սմ, երկարությունը 1,5 - 2 մ ) իջնել ներքև թեք տախտակի վրայով: Մտնել շրջված արկղի մեջ (50 . 50 սմ չափի, բարձրությունը՝ 15 սմ) և դուրս գալ: Անցնել գետնից 12 - 18 սմ բարձրության ձողափայտի կամ պարանի վրայից: Քայլել գետնի վրա, բարձրանալ բլրակի վրա, անցնել առվակի վրայով:

*Սողանցելու եւ մագլցելու վարժություններ.* անցնել պարանի տակով, գերանի վրայից: Բարձրանալ 1–1,5 մ բարձրության սանդուղքով և իջնել:

*Նետելու և գլորելու վարժություններ:* Մեծ գնդակները գլորել և ուղիղ հարթության վրայից գնալ գնդակի ետևից՝ այն ետ բերել: Գնդակը գլորել դաստիարակին (զուգախաղ): Փոքր գնդակը նետել: Մեկ (աջ և ձախ) ձեռքով՝ հեռուն:

*Ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ:* Ձեռքերը բարձրացնել և իջեցնել, ձգել ձեռքերն առաջ, թաքցնել մեջքի ետևում: Մատները սեղմել և ուղղել: Մատներով թխկթխկացնել հատակը (կիսանստած), մատներով բռնել փոքր առարկաներ (օղակներ): Նստած շրջվել աջ և ձախ՝ փոխանցելով առարկան, թեքվել դեպի առաջ և ուղղվել: Կանգնած և նստած թեքվել առաջ, կորանալ փայտի վրայից: Կքանստել բռնվելով:

*Շարժախաղեր:* Ինքնուրույն խաղեր գլորաններով, սայլակներով, ավտոմեքենաներով, ինքնաթիռներով և այլն: Դաստիարակի կողմից կազմակերպված խաղային վարժություններ՝ «Բեր գնդակը, խաղալիքը», «Ուտքերը վեր բարձրացրու», «Փոխանցիր գնդակը», «Գլորիր բլրակից», «Հասիր շիկին», «Բոլորդ արագ ինձ մոտ», «Սողա մինչև չխչիկանը», «Ով ավելի հեռու», «Թաքցնենք խաղալիքը», «Մեծերը և փոքրերը», «Թռչունները թափահարում են թևերը», «Թիթեռ բռնել», «Ծառերը ճոճվում

են», «Շոգեքարշ», «Արջուկ»:

Մինչև 2 տարեկան երեխան **կարողանում է** քայլել առաջադրված ուղղությամբ, բարձրանալ աստիճաններով և իջնել, քայլել թեք տեղադրված տախտակի վրայով: Կարողանում է գնդակը գլորել մի ուղղությամբ և քայլել գնդակի հետևից: Մեծի հետ կարողանում է կատարել վարժություն, խաղալ շարժախաղ, կատարում է պարային շարժումներ, դրական է արձագանքում կոփման միջոցառումներին, ինքնուրույն կատարում է պարզ վարժություններ:

### **Կոփում**

Կատարել առողջարար և կոփող միջոցառումներ՝ օգտագործելով բնական գործոնները՝ օդը, արևը, ջուրը:

Մեկ և կես տարեկանից բարձր տարիք ունեցող երեխաները զբոսնում են օրը երկու անգամ՝ նախաճաշից առաջ և հետ ճաշից հետո: Ամռանը երեխաների օրն ամբողջովին կազմակերպվում է կանաչ և կահավորված բակում: Երկու տարեկան երեխաների մարմինների լիակատար կոփման համար անհրաժեշտ է օդաջերմային բարենպաստ ռեժիմի ստեղծումը շենքում, պետք է ապահովվի խմբասենյակների մշտական օդափոխություն: Խմբասենյակներում օդի ջերմաստիճանը պետք է լինի + 21- +22°C: Մանկական հագուստը սենյակում պետք է լինի երկշերտ:

Քնի ժամանակ ննջարանում պահպանել + 15- +16 ° C ջերմաստիճանը: Կատարել երեխաների կոփում քնելուց հետո՝ հազնվելու ժամանակ և ցերեկը՝ հագուստը փոխելիս: Տաք եղանակին զբոսանքի ժամանակ ապահովել երեխաների կարճատև (3-5 րոպե) մնալը արևի ճառագայթների տակ: Չբոսանքի վերջում թույլ տալ 2-3 րոպե ոտաբոբիկ քայլել տաք ավազի վրա (համոզվելով, որ այն մաքուր է և անվտանգ): Ամռանը զբոսանքի ավարտից հետո ոտքերը լվանալ սենյակային ջերմաստիճանի ջրով:

Հատուկ կոփման ընթացակարգերի բնույթի հարցը պետք է որոշվի նախադպրոցական հաստատության վարչակազմի և բժշկական անձնակազմի կողմից՝ հաշվի առնելով ծնողների ցանկությունները և յուրաքանչյուր երեխայի առողջական վիճակը:

### **Շարժողական ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքները.**

ա. սանն ինքնուրույն կամ մեծի օգնությամբ կարողանում է քայլել առաջադրված ուղղությամբ, բարձրանալ աստիճաններով և իջնել, սողանցել,

- ✓ կատարում է սողանցում,
- ✓ մեծահասակի օգնությամբ, բռնվելով, կամ ինքնուրույն կարողանում է բարձրանալ և իջնել աստիճաններ, բլրակ,
- ✓ քայլում է առաջադրված ուղղությամբ,

բ. կարողանում է անցնել հատակին դրված ոչ բարձր առարկայի վրայով,



- ✓ անցնում է հատակին դրված առարկաների վրայով /խաղալիք, բարձ/,
- գ. կարողանում է քայլել ոչ բարձր, թեք տեղադրված տախտակի վրայով,
- ✓ անցնում, դառնում է թեք տախտակի կամ թեքահարթակի վրայով,
- դ. կարողանում է գնդակը գլորել որոշակի ուղղությամբ և քայլել գնդակի հետևից,
- ✓ նպատակային գլորում է գնդակը և գնում ետևից,
- ե. կարողանում է կատարել մեծի կողմից ցուցադրված ընդհանուր զարգացնող պարզ վարժություններ.
  - ✓ հետևելով մեծահասակի օրինակին՝ փորձում է կրկնել վարժությունները,
- զ. կարողանում է խաղալ շարժախաղեր պարզ շարժողական գործողություններով,
  - ✓ կատարում է ակտիվ խաղային շարժումներ,
  - ✓ կատարում է պարզ գործողություններ,
- է. կատարում է պարային պարզ շարժումներ նվագակցությամբ,
  - ✓ կատարում է պարային ռիթմիկ շարժումներ,
  - ✓ կրկնօրինակում է տեսած պարզ շարժումները,
  - ✓ կատարում է երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ: (թռչունը թռչում է և այլն),
  - ✓ նմանակում երաժշտական շարժվող խաղալիքին, վազում է խաղալիքի հետևից:
  - ✓ շարժում է մատները երաժշտության ներքո,
  - ✓ հարվածում է դափին, թափահարում է չիչիսկանը,
  - ✓ տարբերում է երաժշտական գործիքների ձայնը:
- ը. դրական է արձագանքում կոփման միջոցառումներին,
  - ✓ դրական է արձագանքում լոգանքին, մերսմանը, զբոսանքին,
- թ. շարժողական գործողությունների ժամանակ դրսևորում է ինքնուրույնություն.
  - ✓ հիմնական շարժումները՝ քայլք, վազք, ցատկ, սողանցում, մազվցում, նետում, կատարում է ինքնուրույն:

## ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Կյանքի երկրորդ տարում տեղի է ունենում խոսքի գործառույթների արագ զարգացում: Թեև մեծահասակների և հասակակիցների խոսքի ընկալման զարգացման տեմպերը դեռ առաջ են երեխայի խոսելու կարողությունից, սակայն երկրորդ տարվա վերջում ակտիվ բառապաշարն արդեն կազմում է 200-300 բառ, այլ կերպ ասած՝ համեմատած նախորդ տարիքային խմբի հետ ավելանում է 20-30 անգամ:

Առաջին ենթախմբի սաների բառապաշարը համալրվում է հաճախ օգտագործվող կենցաղային իրերի և ամենօրյա պարզ գործողությունների անվանումներով (օճառ, սանր, տիկնիկ, հանվել, հագնվել, լվացվել, ուտել, պարել, երգել և այլն):

Երկրորդ ենթախմբի սաների բառապաշարը համալրվում է սանին շրջապատող առարկաների գույնը, չափը, գտնվելու վայրը, նշանակությունը արտահայտող բառերով (հեռու, մոտ, սպիտակ, կարմիր, մեծ, փոքր ...): Երեխաները աստիճանաբար սովորում են մտապահել և անվանել իրենց կողմից հաճախ կատարվող գործողությունները (օճառը վերցնել և ձեռքերը ջրով լվանալ, հետո ձեռքերը սրբել սրբիչով և այլն):

Կյանքի երկրորդ տարվա առաջին կեսին երեխայի խոսքը իրադրային է, և մտքերը արտահայտվում են պարզ բառերի միջոցով (տուր, ջուր, մոտ, արի, գնա, շունիկ, ծիտիկ և այլն):

Աստիճանաբար, ճիշտ կազմակերպված աշխատանքի արդյունքում, սանը սովորում է արտաբերել ավելի երկար հնչյունային կազմ ունեցող բառեր, իսկ մինչև կյանքի երկրորդ տարվա վերջը՝ խնդրանքները, ցանկությունները, տպավորությունները արտահայտել 2-3 բառից բաղկացած կարճ նախադասություններով:

1-2 տարեկանների խոսքի զարգացման ծրագրային խնդիրներն են՝

- ✓ Համալրել բառապաշարը, զարգացնել բանավոր խոսքը և ճիշտ հնչարտաբերումը:
- ✓ Սովորեցնել առարկաների անունները, հասկանալ դրանց նշանակությունը և օգտագործման ձևերը:
- ✓ Ձևավորել իրենց կարիքներն ու ցանկությունները բառերով կամ կարճ նախադասություններով արտահայտելու, մեծահասակների և հասակակիցների հետ պարզ նախադասություններով հաղորդակցվելու կարողություններ:

### 1 տարեկանից մինչև 1 տարեկան 6 ամսական

#### Խոսքի ընկալման զարգացում

Հարստացնել երեխայի բառապաշարը ծանոթ առարկաների և դրանց հատկանիշների, գործողությունների անվանումներով: Սովորեցնել մեծահասակի իրահանգով գտնել և

ցույց տալ ծանոթ առարկաները, անձնական օգտագործման իրերը կենցաղում և նկարներում (խաղալիք, հագուստ, սպասք և այլն) :

Սովորեցնել հասկանալ և ցույց տալ մարմնի մասերը (ձեռք, ոտք, գլուխ), դեմքի մասերը (բերան, աչք, ականջ), կենցաղային և խաղային գործողությունները (խաղալ, քայլել, լվանալ, ուտել, քնել և այլն ), առարկաների հատկանիշները՝ գույնը (կարմիր, կապույտ), չափը (մեծ, փոքր), ձևը (քառակուսի, կլոր):

Սաներին սովորեցնել հասկանալ պարզ արտահայտություններ, որոնցով մեծահասակն ուղեկցում է խաղալիքների ցուցադրությունը, իր գործողությունները:

Ցուցադրել երկու-երեք գործողությունից բաղկացած փոքր բեմականացումներ (խաղալիքներով կամ սյուժետային կերպարներով ):

### **Ակտիվ խոսքի զարգացում**

Բարելավել սաների՝ հաճախակի լսվող ձայնարկություններն ու բառերը ընդօրինակելու կարողությունը: Լրացնել ակտիվ բառապաշարը ծանոթ գործողությունների անուններով (քնել, գնալ, ընկել և այլն):

Սովորեցնել ցույց տալ և անվանել նկարում պատկերված ծանոթ առարկաները անշարժ դիրքով (1 տարի 3 ամիս) և շարժման մեջ կամ գործողություն կատարելիս (1 տարի 6 ամիս):

Երեխաներին սովորեցնել պատասխանել «Ի՞նչ է սա», «Ի՞նչ է անում» հարցերին:

Չարգացնել բանավոր հաղորդակցումը, խրախուսել հաղորդակցության ոչ խոսքային ձևերից խոսքային ձևին անցնելը:

Ստեղծել մոտիվացնող իրադրություններ և համապատասխան խոսքային միջավայր, ինչը կրախուսի երեխային հաղորդակցվել պարզ համառոտ (երկու բառից կազմված) նախադասություններով:

## **1 տարեկան 6 ամսականից մինչև 2 տարեկան**

### **Խոսքի ընկալման զարգացում**

Շարունակել ընդլայնել բառապաշարը:

Սովորեցնել սաներին առարկաների գույնը (կարմիր, կապույտ, դեղին, կանաչ), չափսը (մեծ, փոքր), ձևը (կլոր, տափակ, սուր), վիճակը (մաքուր, կեղտոտ), ինչպես նաև՝ առարկայի գտնվելու վայրը (այստեղ, այնտեղ), ժամանակ (այսօր, առավոտյան, գիշերը, հիմա, հետո) և քանակ (մեկ և շատ) արտահայտող բառեր:

Ամրապնդել սաների՝ մեծահասակի ցուցումով, ըստ գույնի ծանոթ առարկաներ ընտրելու կարողությունը:

Սովորեցնել հասկանալ կենդանիների շարժման ձևերը (թռչել, վազել, լողալ և այլն), կերակրման եղանակները (կծել, ծամել, կտցահարել և այլն), ձայները (մյաու-մլավոց, հաֆ-

հաֆ - հաչոց և այլն) արտահայտող բառերը, մարդու շարժման ձևերը (քայլել, վազել և այլն), աշխատանքային գործողությունները (մաքել, հավաքել, եփել, կառուցել, վարել...), ինչպես նաև՝ տրամադրություն, հոգեվիճակ (վախեցած, լացող, ուրախ, տխուր...) արտահայտող բառեր:

Սովորեցնել հասկանալ նախադասություններ **մեջ, վրա, տակ** կապերով:

Ձևավորել ընդհանրացված պատկերացումներ առարկաների և գործողությունների մասին: Սովորեցնել ճանաչել և ցույց տալ ծանոթ առարկաները՝ անկախ դրանց չափից և գույնից (գնդակը մեծ է, փոքր է, կարմիր է, կապույտ է և այլն): Սովորեցնել նույն գործողությունը փոխկապակցել մի քանի առարկաների հետ (կարող եք կերակրել տիկնիկին, արջին, շնիկին և այլն):

Խթանել խաղալիքներով, տիկնիկներով կարճ ներկայացումների բովանդակության ընկալումը:

### **Ակտիվ խոսքի զարգացում**

Խրախուսել հորինված բառերի փոխարինումը սովորական բառերով (հաֆ-հաֆի փոխարեն՝ շնիկ և այլն):

Խրախուսել արտասանել նոր բառեր, երկու կամ երեք բառից բաղկացած նախադասություններ, պատասխանել մեծահասակների հարցերին պարզ նախադասություններով:

Շարունակել ընդլայնել ակտիվ բառապաշարը. սովորեցնել անվանել առարկաները, դրանց նշանակությունը, հատկանիշները, գործողությունները, ճիշտ օգտագործել դերանունները (ես, դու, այստեղ, այնտեղ), կապերը (մեջ, վրա, համար):

Ձևավորել շրջապատող միջավայրի առարկաները բնական միջավայրում, նկարներում անվանելու կարողությունը: Սովորեցնել ճանաչել և անվանել նկարներում տարբեր սեռի և տարիքի մարդկանց:

Խթանել երեխաների հաղորդակցության ձգտումը. տվեք նրանց մեծահասակներին և հասակակիցներին դիմելու առիթներ (հարցրեք, շնորհակալություն հայտնեք, առաջարկեք, ակտիվացրեք ուշադրությունը և դիտունակությունը):

### **Ծանոթացում գեղարվեստական գրականությանը**

Սովորեցնել լսել և հասկանալ կարճ, մատչելի ժողովրդական երգեր, տաղեր, խաղիկներ, մանկական բանաստեղծություններ, հեքիաթներ, ինչպես նաև՝ հեղինակային գործեր (արձակ, չափածո):

Ընթերցանությունը (պատմելը) ուղեկցել նկարներ, խաղալիքներ, գործողություններ ցույց տալով: Երեխաներին սովորեցնել լսել հայտնի ստեղծագործություններ՝ առանց տեսողական ուղեկցության:

Հնարավորություն ընձեռել մեծահասակից հետո կրկնել բանաստեղծական տեքստի որոշ բառեր և կատարել պարզ գործողություններ, որոնք նշված են գեղարվեստական ստեղծագործության մեջ: Ուշադրություն դարձնել երեխաների խոսքի արտահայտչականությանը:

Երեխաներին ընթերցելու և պատմելու համար ընտրել հայ բանահյուսության, հայ, ռուս և արտասահմանյան մանկական գրականության նմուշներ. «Ծիվ-ծիվ, աքլորածիվ», «Թըռ-թըռ», «Դոփ-դոփ արա», «Խնոցի», «Մատիկներով խաղ», «Նանիկ արա», «Օրոր» և այլ խաղիկներ, որոնք երգեցիկ են պարունակում են ձայնավոր հնչյուններ, կրկնություններ: Ռուսական ժող. հեքիաթ «Շաղգամը», «Ուլիկը», «Կռունկներ», «Արտուտիկ» Հ. Թումանյան, «Նորելուկը», «Բայ-բայ», «Հավիկ-հավիկ», «Ճոճանակ», «Առաջին քայլը», «Չոփ-չոփ» Ս. Կապուտիկյան, «Ճուտիկը» Ս. Մկրտչյան, «Ճագարիկ» Ժ. Կոնդակչյան, «Ծիտիկ – ծիտիկ» Փ. Պողոսյան, «Իմ Ձին» Գ. Բորյան, «Գնդակը» Էդ. Ավագյան, «Կաթ խմիր», «Ծաղրածու տիկնիկը» Լ.Դուրյան, «Օրոր» Հ.Հայրապետյան, «Կլոր ու թմբիկ եմ» Յու. Սահակյան, «Իմ գնդակը» Վ.Տայյան, «Բադիկ» Ռ.Պատկանյան, «Սագեր» Ռ.Ղարիբյան, «Լուսին», «Ճուտիկ» Աթ. Խնկոյան, «Թռչնիկներ» Ղ.Աղայան և այլն.

### **խոսքի և հաղորդակցական ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքներն են.**

ա. սանը հասկանում է իրեն ուղղված խոսքը և արձագանքում դրան խոսքային և ոչ խոսքային միջոցներով,

- ✓ «այո» կամ «ոչ» է ասում կամ պատասխանում է գլխի շարժումով,
- ✓ կատարում է պարզ հրահանգներ /տուր, արի, գնա, ցույց տուր/:

բ. բառը վերագրում է կոնկրետ առարկայի, գործողության,

- ✓ ստեղծում է նոր փոխարինող բառեր իրեն ծանոթ առարկաների, գործողությունների համար,

գ. մեկ բառով անվանում է որևէ հատկանիշով նման առարկաները,

դ. ներգրավվում է խոսքային, հաղորդակցական տարբեր իրավիճակների մեջ,

- ✓ պարզ բառերի, բառակապակցությունների կամ ժեստերի միջոցով մասնակցում է խոսակցությանը:

ե. հաղորդակցման ընթացքում արտահայտում է սեփական ցանկություններն ու պահանջները՝ կազմելով 2-3 բառից բաղկացած նախադասություններ.

- ✓ ցանկություններն արտահայտում է պարզ, իմաստ արտահայտող բառակապակցությունների կամ նախադասությունների միջոցով,
- ✓ ուղղում է հարցեր,
- ✓ արտահայտում է պահանջ:



## ՅՈՒՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Վաղ երկրորդ խմբում սանի հուզական և սոցիալ-անձնային զարգացման խնդիրներն են՝

- Ստեղծել պայմաններ հասակակիցների և մեծահասակների հետ անկաշկանդ և ազատ շփվելու համար:
- Խրախուսել ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ շփվելու, հաղորդակցվելու ցանկությունը:
- Ձևավորել բարեվարքության տարրական հմտություններ. մարդկանց ողջունելու, հրաժեշտ տալու, շնորհակալություն հայտնելու, մեծահասակների հաճարարությունները կատարելու, հասակակիցներին ժպտալու, սիրալից հաղորդակցվելու, շփվելու, զիջելու:
- Չարգացնել հուզական և գեղագիտական ընկալումը, սովորեցնել դիտել նկարներ, նկարագարող քարտեր, բնության երևույթներ:

Կյանքի երկրորդ տարում երեխան սովորում է մեծահասակների և երեխաների անունները, որոնց հետ ամեն օր շփվում է, ինչպես նաև յուրացնում է որոշ ընտանեկան հարաբերություններ (մայրիկ, հայրիկ, տատիկ, պապիկ): Նա հասկանում է «ուրախություն», «զայրույթ», «վախ», «հիացմունք» արտահայտող բառերով արտահայտված տարրական մարդկային զգացմունքները: Խոսքի մեջ արժեքային դատողություններ են հայտնվում՝ «վատ, լավ, գեղեցիկ»: Երեխան սկսում է հոգատար վերաբերմունք դրսևորել փափուկ խաղալիքի կամ տիկնիկի նկատմամբ շոյելով կամ «սիրելով» (փորձում է կրկնօրինակել մեծահասակների վարքը):

Բարելավվում են հաղորդակցվելու հմտությունները. սովորում է բարևել, հրաժեշտ տալ, շնորհակալություն հայտնել, ժպտալ, ողջագուրվել և այլն:

Ծանոթ միջավայրում կողմնորոշման ընդլայնումը (իմացությունը, թե ինչպես են կոչվում խմբասենյակի մասերը, կահույքը, հագուստը, սպասքը) օգնում է երեխային կատարել պարզ (մեկից-երկու կամ երեք գործողություններից բաղկացած) առաջադրանքներ: Աստիճանաբար սովորում է պահպանել վարքի տարրական կանոնները, որոնք նշվում են «կարող ես, չես կարող, պետք է» բառերով: Մեծահասակի հետ շփումը ձեռք է բերում գործնական, առարկայական բնույթ:

Երկրորդ տարում մեծանում է մեծահասակի հետ ակտիվ հաղորդակցվելու անհրաժեշտությունը: Երեխան ոչ վերբալ հաղորդակցումից աստիճանաբար անցնում է վերբալ հաղորդակցման, կարողանում է մտքերը, ցանկությունները, վերաբերմունքը արտահայտել միավանկ բառերի, պարզ նախադասությունների միջոցով: Խոսքը դեռևս իրադրային է, բայց դառնում է մեծահասակի և հասակակիցների հետ շփման հիմնական միջոց և նպաստում է երեխայի սոցիալականացմանը:

Կյանքի երկրորդ տարում զարգանում է հուզական շփումը, մեծանում է կապվածությունը սիրելի մեծահասակների, հասակակիցների, կենդանու, խաղալիքի հետ: Այս տարիքի երեխաների հույզերի ընկալման փորձը փոքր է: Երեխան կարող է լաց լինել և նույնիսկ հարվածել իրեն աջակցողներին և ապրումակցողներին: Նա կարող է անհանդուրժող լինել, երբ միջամտում են իր խաղին: Այս տարիքում երեխաները խաղում են միայնակ, կողք-կողքի: Կարելի է սովորեցնել պահպանել «հեռավորության կարգը»:

Նրանք սովորում են խաղալ և գործել կողք կողքի, առանց միմյանց գործողություններին միջամտելու: Միևնույն ժամանակ օգտագործում են պարզ բառեր՝ «վերցրու», «տուր», «թող», «չեմ ուզում» հաղորդակցվելու նպատակով:

Կյանքի երկրորդ տարվա հիմնական ձեռքբերումները կարելի է համարել՝

- Տարրական շարժումների՝ քայլելու, բռնելու բարելավումը. ինչը թույլ է տալիս մոտենալ հասակակցին կամ ծանոթ մեծահասակին, ինքնուրույն ինչ-որ առարկա վերցնել, գործողություններ կատարել, խոսքային կամ ոչ խոսքային եղանակներով խաղի հրավիրել:
- Չարգանում է հաղորդակցվելու կարողությունը. խոսքի օգնությամբ մեծահասակը կարող է կազմակերպել երեխայի վարքը: Մեծանում է երեխայի ինքնուրույնությունը, նա յուրացնում է խմբում գործելու վարքային կանոնները (խաղալ կողք կողքի, առանց ուրիշների գործողություններին միջամտելու, օգնել, եթե հնարավոր է):
- Սանը սկսում է ընկալել իրեն որպես առանձին էակ և ճանաչում է իրեն հայելում, նկարների և տեսագրությունների մեջ:

Այս ամենը խթանում է սանի սոցիալականացումն ու հուզական զարգացումը:

Սանի հուզական և սոցիալ-անձնային զարգացումն ապահովվում է նաև գեղարվեստական գրականության, երաժշտության, շրջապատող միջավայրում և բնության մեջ երեխային գեղեցիկին հաղորդակից դարձնելու, ինչպես նաև՝ խաղային գործունեության ժամանակ:

## **1-2 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Այս տարիքում շարունակում է զարգանալ սաների հուզական արձագանքը երաժշտության հանդեպ: Նրանք կարող են ինքնուրույն գտնել ձայնի աղբյուրը և հաճույքով լսել երաժշտությունը: Սաները տարբերում են երաժշտությունը՝ ուրախ և հանգիստ, ցածր և բարձր հնչունները, հնչողությունը և նույնիսկ տեմբրը: Նրանք երգում են մեծահասակի հետ միասին, կրկնում են երգի բառերի վերջավորությունները, երաժշտության ներքո կատարում են ամենապարզ շարժումները՝ ծափահարում են,



հարվածում ուղքերին, պտտվում են: Երաժշտությունն օգնում է նրանց դառնալու առավել ակտիվ:

## **Նպատակը`**

- Ձևավորել 1-2 տարեկան սաների հուզական և գեղագիտական ընկալումները՝ երաժշտության միջոցով:

### **1 -ից - 1 տարի 6 ամսական**

#### **Ունկնդրում**

- սեր և հետաքրքրություն առաջացնել երաժշտության հանդեպ,
- երաժշտության հանդեպ հուզական արձագանք առաջացնել՝ օգտագործելով տեխնիկայի բազմազանություն, լսել բնության ձայները,
- ներկայացնել զվարճալի և հանգիստ երաժշտություն,

#### **Ձայնավարժություն, երգեցողություն**

- աստիճանաբար զարգացնել մեծահասակների հետ երգը սկսելու և այն ավարտելու ունակությունը,
- օգնել սաներին հասկանալու իրենց դուր եկած երգի բովանդակությունը,
- սաների հետ բազմիցս կրկնել արդեն ծանոթ ստեղծագործությունները:

#### **Երաժշտաշարժական վարժություններ**

- սաների մոտ ստեղծել ուրախ տրամադրություն երգելու, շարժվելու ընթացքում,
- զարգացնել երաժշտության ներքո քայլելու կարողություն: (ժապավենը թափահարել, ձեռքերով պտույտներ կատարել և այլն)

#### **Պար**

- կատարել ամենապարզ պարային շարժումներ (ոտքից ոտք անցնել, ծափ տալ:

#### **Խաղ**

- Ձևավորել կենդանիներին, հեքիաթի հերոսներին բնորոշ շարժումներ անելու, նրանց ձայնը նմանակելու ունակություն (թռչունը ծվվալով թռչում է, նապաստակը թռչկոտում է, արջը մռնչալով քայլում է):

#### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

- զարգացնել լսողությամբ տարբեր տեմբրերի ձայնը տարբերելու ունակություն՝ օգտագործելով երաժշտական գործիքներ (թմբուկ, ֆլեյտա),
- օգնել թափահարել չխչխկանը, հարվածել դափին երաժշտության ներքո:

### **1,6 ամսականից մինչև 2 տարեկան**

#### **Ունկնդրում**

- զարգացնել երաժշտությունն ունկնդրելու կարողություն,

- սաների մոտ զարգացնել երաժշտական հիշողությունը,
- խթանել ծանոթ երաժշտական ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ լսելու ցանկությունը:

### **Երգ**

- խթանել երգելիս սաների ինքնուրույն գործունեությունը (երգել պարզ մեղեդիներ, երգեր):

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- շարունակել կատարելագործել շարժումները երաժշտության ներքո, սովորեցնել դրանք կատարել ինքնուրույն:

### **Պար**

- ձևավորել երաժշտության բնույթին համապատասխան շարժումները փոխելու կարողություն (քայլելուց անցնել պտտվելուն, դոփել):

### **Խաղ**

- օգնել զգալ երաժշտության բնույթը և փոխանցել այն խաղային գործողություններով (արջը քայլում է, նապաստակը ցատկում է, թռչունը թռչում է)՝ նմանակելով արտաբերել նրանց ձայները:

### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

- օգնել տարբերակել երաժշտական գործիքների (շվի, թմբուկ) տեմբրային հնչողությունը:

### **Հորինում (իմպրովիզացիա)**

- զարգացնել սաների երևակայությունը:

### **Մատների մարզանք**

- երաժշտության ներքո ամրացնել սաների ափերի և մատների մկանները:

### **Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)**

- երաժշտության ներքո, պարագաներով կամ առանց պարագաների, ռիթմիկ շարժումների միջոցով զարգացնել սաների ռիթմն ու լսողությունը, ուշադրության կենտրոնացումը, հիշողությունը, ճարպկությունը:

### **Երաժշտական թերապիա**

- նպաստել սաների առողջական համակարգի խթանմանը, լարվածության վերացմանը՝ երաժշտության ներքո:

### **Խնդիրները՝**

- սեր և հետաքրքրություն առաջացնել երաժշտության հանդեպ,
- առաջացնել ուրախ տրամադրություն

- երաժշտության հանդեպ հուզական արձագանք առաջացնել՝ օգտագործելով տեխնիկայի բազմազանություն, լսել բնության ձայները,
- խթանել երաժշտական ստեղծագործություններ ունկնդրելու ցանկություն,
- սաների հետ բազմիցս կրկնել արդեն ծանոթ ստեղծագործությունները:
- **1-ից- 1 տարի 6 ամսականում** ներկայացնել զվարճալի և հանգիստ երաժշտություն, զարգացնել լսողությամբ ձայները տարբերելու ունակություն՝ օգտագործելով երաժշտական գործիքներ (թմբուկ, ֆլեյտա),
- աջակցել սաներին հասկանալու իրենց դուր եկած երգի բովանդակությունը,
- զարգացնել մեծահասակներին ձայնակցելու կարողություն,
- զարգացնել երաժշտության ներքո քայլելու, շարժումներ կատարելու կարողություն (նոքից ուղե անցնել, ծափ տալ, չիսկչիկացնել, ժապավենը թափահարել, ձեռքերով պտույտներ կատարել և այլն),
- **1,6 ամսականից մինչև 2 տարեկան** սաների մոտ զարգացնել երաժշտական հիշողությունը,
- խթանել ծանոթ երաժշտական ստեղծագործությունը մինչև վերջ լսելու ցանկություն,
- օգնել տարբերակել երաժշտական գործիքների (շվի, թմբուկ) տեմբրային հնչողությունը,
- խրախուսել ինքնուրույն երգելու փորձերը, ցանկությունը (երգել պարզ մեղեդիներ, երգեր),
- շարունակել կատարելագործել երաժշտության շարժումները, սովորեցնել դրանք կատարել ինքնուրույն,
- զարգացնել երաժշտությունն ունկնդրելու և երաժշտության բնույթին համապատասխան շարժումները փոխելու կարողություն (քայլելուց անցնել պտտվելուն),
- օգնել զգալ երաժշտության բնույթը և փոխանցել այն խաղային գործողություններով (արջը քայլում է, նապաստակը ցատկում է, թռչունը թռչում է)՝ նմանակելով արտաբերել նրանց ձայները:

Այս տարիքային խմբում կազմակերպվում են երաժշտության ունկնդրում, երգի ուսուցում, երաժշտաշարժական վարժություններ, երաժշտական խաղեր, կարելի է նաև անցկացնել երաժշտական թերապիա:

**Երաժշտաշարժական վարժությունները երաժշտության ներքո կատարվող ուղիղ շարժումներ են.** քայլք, վազք, ցատկ, պարային պարզ շարժումներ՝ հետագայում պարերի մեջ կիրառելու նպատակով: Այս վարժությունները օգնում են սաներին

կողմնորոշվել տարածության մեջ, զարգացնել երևակայությունը, երաժշտական լսողությունը և շարժումները, ապահովում են բարձր հուզական մթնոլորտ: Այսպիսի վարժություններ հիմնականում անցկացվում են մեկ տարեկան վեց ամսականից մինչև երկու տարեկանների ենթախմբում:

**Երաժշտական խաղը** ստեղծագործական գործունեություն է և նպաստում է սանի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը: Այն պետք է ունենա զարմանքի, զվարճանքի, տրամաբանության տարր: Խաղը վարում է դաստիարակը (արջ, նապաստակ, կատու, տիկնիկ), նա դառնում է խաղի ամենաակտիվ մասնակիցը, քանի որ ցուցադրում է համապատասխան շարժումները, իսկ երեխաները կրկնօրինակում են: Խաղերը կարող են լինել երաժշտադիդակտիկ, երաժշտական շարժախաղեր, խաղերգեր:

**Երաժշտական թերապիա** - Երաժշտական թերապիան շփման ձև է երաժշտության դաստիարակի և երեխայի միջև՝ երաժշտության հնչյունների ներքո: Երեխաները հարմարավետ տեղավորված փակ կամ բաց աչքերով լուռ ունկնդրում են երաժշտություն, որը կարող է լինել հանդարտ մեղեդի կամ բնության ձայների կրկնօրինակում. թռչունների ծվլոց, առվակի քչքչոց, մեղունների բզզոց:

### **Հուզական, սոցիալ-անձնային ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքները՝**

**Ա.** սանը սկսում է տարբերակված արձագանքել շրջապատին, նրա գործողություններն ունեն հուզական երանգավորում.

- գրավում է ծանոթ մեծահասակների ուշադրությունը խոսքային և ոչ խոսքային ձևերով,
- դրականորեն է արձագանքում մեծահասակների ուղղորդմանը:

**Բ.** Իր հույզերն ու զգացողությունները արտահայտում է շարժումներով, երգի և պարի միջոցով.

- ✓ ճանաչում է ծանոթ երաժշտությունը,
- ✓ շարժվում կամ պարում է ծանոթ հնչյունների ներքո՝ զգալով երաժշտության բնույթը կատարում է երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ (թռչունը թռչում է, անձրև է տեղում և այլն):
- ✓ հուզականորեն արձագանքում է երաժշտությանը,
- ✓ զգացմունքայնորեն ներգրավվում է երաժշտական գործունեության մեջ,
- ✓ ինքնուրույն գտնում է ձայնի աղբյուրը,
- ✓ տարբերում է ուրախ և տխուր, ցածր և բարձր հնչունները,
- ✓ դրական հույզերն արտահայտում է «երգելով»,
- ✓ հասկանում է երգի բովանդակությունը,

- ✓ երգում է մեծահասակի հետ ստեղծագործության բառերի վերջավորությունները, բառերը կամ տողերը,
- ✓ երգում է պարզ մեղեդիներ:
- ✓ կատարում է ամենապարզ շարժումները՝ ծափահարում, ոտքերով հարվածում, պտտվում, նմանակում, հաղորդակցվում, վազում խաղալիքի հետևից,
- ✓ գտնում է ձայնի աղբյուրը ինքնուրույն,
- ✓ ունկնդրի երաժշտական ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ,
- ✓ զգում է երաժշտության բնույթը,
- ✓ տարբերում է ցածր և բարձր երաժշտական հնչունները,
- ✓ տարբերում է ուրախ և տխուր ինտոնացիաները,
- ✓ լսում է բնության ձայները:

Գ. Դրսևորում է դրական վերաբերմունք մարդկանց նկատմամբ, շփվում է ծանոթ մեծահասակների և հարազատների հետ.

- Սկսում է ավելի ջերմ շփվել ծանոթ մեծահասակների հետ,
- Կրկնօրինակում է մեծահասակների վարքը,
- Ինքնուրույն խաղալիս փորձում է խաղի մեջ ներգրավել այլ երեխայի:

Դ. Մեծահասակների հետ շփվելիս ուշադիր լսում և կատարում է նրանց պարզ հրահանգները.

- պատասխանում է մեծահասակների բարևին,
- շփվում է ծանոթ մեծահասակների հետ,
- կարողանում է մեծահասակի հետ խաղալիս սպասել իր հերթին.:

Ե. Ցուցաբերում է հետաքրքրություն սեփական անձի նկատմամբ.

- ճանաչում է իրեն հայելու մեջ,
- կարողանում է անվանել և ցույց տալ մարմնի առնվազն չորս մաս,
- երբեմն կարողանում է մատիկով ցույց տալ իր տարիքը,
- ուսումնասիրում է իր արտաքին տեսքը, մարմնի մասերը, գիտի իր անունը:

## ԻՄԱՑԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Այս տարիքում կենտրոնական նյարդային համակարգը դառնում է ավելի դիմացկուն: Կատարելագործվում են գլխուղեղի կեղևի ֆունկցիաները, զարգանում է հիշողությունը, կայունանում է սրտանոթային համակարգը: Այս ուղղությամբ ուսումնադաստիարակաչկան գործընթացի խնդիրներն են՝

- ✓ Խրախուսել սաների հետաքրքրասիրությունը:
- ✓ Հարստացնել զգայական փորձը:
- ✓ Չարգացնել ընկալումը, մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը, առարկաներով գործողություններ կատարելու կարողությունը:
- ✓ Ստեղծել առարկայական խաղային միջավայր, որտեղ երեխան հնարավորություն կունենա խաղալով ճանաչել արտաքին աշխարհը, անկենդան և կենդանի բնությունը:

Անհրաժեշտ է ընտրել այնպիսի խաղալիքներ և զարգացնող խաղեր, որոնք նախատեսված են 1-ից 2 տարեկան սաների համար և նպաստում են նրանց զգայական փորձի, ճանաչողության ընդլայնմանը: Անհրաժեշտ է սաների հետ խաղալ այնպիսի խաղեր, որոնք կենթադրեն ծանոթ իրավիճակներ:

### 1 տարեկանից մինչև 1 տարեկան 6 ամսական

Չարգացնել շոշափելու, համի, հոտի, տեսողական և լսողական զգայարանները: Սովորեցնել կատարել առարկայական գործողություններ՝ մեծահասակի օգնությամբ՝ բուրգի կոնաձև հիմքի վրա որոշակի հաջորդականությամբ հավաքել տարբեր չափսերի և գույների օղակներ:

Չարգացնել առարկայական գործողություններ կատարելու հմտությունները (բացել - փակել, մոտեցնել-հեռացնել, գլորել, տեղադրել, դասավորել-քանդել), ուշադրությունը կենտրոնացնել դրանց ձևի և չափի վրա (մեծ, փոքր), գույնի վրա (կարմիր, կապույտ), հարթ մակերեսի վրա (շրջան, քառակուսի, եռանկյուն): Մարզել հիշողությունը. զարգացնել համադրելու, համեմատելու կարողությունները. սովորեցնել խաղալ տարբեր դիդակտիկ խաղալիքներով (գունդ, աղյուսներ, տուփեր, խորանարդիկներ, մեծ լեզուներ, մեծ կտորներից բաղկացած սեղանային խաղեր և այլն):

**Խաղ-պարապմունքներ կառուցողական նյութերով:** Երկրաչափական կառուցողական նյութերով (խորանարդ, աղյուս, գունդ) կատարել գործողություններ և գործողությունները ուղեկցել խոսքով, ստեղծել փոքրիկ կառույցներ՝ դաստիարակի օգնությամբ :

Առարկայական խաղալիքները և դիդակտիկ նյութերը պետք է լինեն անվտանգ և ապահով :

### **1 տարեկան 6 ամսականից մինչև 2 տարեկան**

Շարունակել հարստացնել սաների զգայական փորձը: Մեծահասակի օգնությամբ հավաքել բուրգ, սովորեցնել դասավորել առարկաները՝ ըստ չափերի (մեծից փոքր). 4-5 օղակներից բաղկացած աշտարակը:

Սովորեցնել երկրաչափական պատկերները տեղադրել հարթ մակերեսի վրա (շրջան, քառակուսի, ուղղանկյուն), դիդակտիկ խորանարդիկները դասավորել տուփի մեջ:

Սովորեցնել ճանաչել հիմնական գույները և մեծահասակի օգնությամբ ընտրել այդ գույների առարկաները (կարմիր, կապույտ, դեղին):

Անհրաժեշտ է օգտագործել այս տարիքին համապատասխան դիդակտիկ նյութեր, սեղանային խաղեր, բույսերի և կենդանիների պատկերներով խաղալիքներ և պատկերազարդ նկարներ:

Առօրյայում, խաղերի և զբոսանքի ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրել շրջապատող առարկաների, կենցաղային և բնության երևույթների վրա, հարցեր տալ՝ ակտիվացնել հետաքրքրասիրությունը, արձագանքել երեխայի՝ ինչ-որ առարկայով կամ երևույթով հետաքրքրվածությանը. հնարավորություն տալ շոշափել, բռնել, զգալ: Խոսել, բացատրել, պատմել, ներկայացնել, մոտիկից ցույց տալ հետաքրքրության օբյեկտը՝ ձևավորելով սանի իմացական կարողությունները:

### **Խաղ-պարապմունքներ կառուցողական նյութերով (լեգոներ, բնական նյութեր).**

Շարունակել սաներին ծանոթացնել կառուցողական նյութերին, սովորեցնել դրանցով կատարել համապատասխան գործողություններ, ստեղծագործել պարզ կառույցներ (2-3 կտորից բաղկացած), ճանաչել որոշ հատկանիշներ (խորանարդիկները կարելի է դնել իրար վրա, գունդը գլորվում է): Խրախուսել մեծահասակի աջակցությամբ երեխայի կառուցելու ձգտումը:

Հատուկ կազմակերպված խաղ-պարապմունքների, ինքնաբուխ կամ մեծահասակի կողմից ուղղորդվող խաղերի միջոցով զարգացնել երեխայի ճանաչողությունը:

### **Իմացական ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքները**

ա. սանն ուսումնասիրում և համեմատում է առարկաները,

✓ առարկաներն օգտագործում է ըստ նշանակության,

բ. հետաքրքրություն է ցուցաբերում նոր առարկաների նկատմամբ,

✓ ուսումնասիրում է նոր առարկաները,

գ. հասկանում է առարկայական գործողությունների և իրադարձությունների հաջորդականությունը, դրանց միջև գոյություն ունեցող կապերը,

- ✓ կրկնում է իրեն ծանոթ գործողությունների հաջորդականությունը,
- դ. ծանոթ առարկաներով կատարում է ֆունկցիոնալ գործողություններ, հետաքրքրություն է դրսևորում մեծահասակների գործողությունների նկատմամբ,
- ✓ պարզագույն գործողությունների միջոցով փորձում է կրկնօրինակել տեսածը:



## **ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ , ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ , ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՈԼՈՐՏ**

### **Ինքնասպասարկման կարողությունների ձևավորում**

Օրվա կանոնակարգով ամրագրված գործընթացները (սնվելը, քնելը, արթնանալը, զբոսնելը, հիգիենայի ընթացակարգերը) *գրադեցնում* են երեխայի արթուն ժամանակի զգալի մասը: Այս գործողությունները կատարելու համար սանին անհրաժեշտ է մեծահասակների անմիջական օգնությունը: Անընդհատ օգնելով և սովորեցնելով հարկավոր է ձևավորել հիգիենայի և ինքնասպասարկման կարողություններ: Այս տարիքում զարգանում է մանր մոտորիկան, սանը կարողանում է ինքնուրույն բռնել գդալը և ուտել դրանով: Կարողանում է հանել հեշտ հանվող հագուստը և փորձում է ինքնուրույն լվացվել:

Կանոնակարգի ընթացքում յուրաքանչյուր սանի անհրաժեշտ է աստիճանաբար ընդգրկել ինքնասպասարկման գործունեության մեջ ( օրինակ՝ սկզբում սեղանի շուրջ նստեցնել այն երեխաներին ( 2-3 երեխա), ովքեր կարողանում ինքնուրույն ուտել:

1 տարեկան 6 ամսականից սկսած սկզբում պետք է սովորեցնել սաներին ինքնուրույն գդալով ուտել թանձր սնունդը, իսկ մինչև երկրորդ տարին լրանալը՝ նաև ապուրը: Աստիճանաբար սովորեցնել ինքնուրույն ուտել տարբեր ուտելիքներ, օգտագործել անձեռոցիկ (մեծահասակի օգնությամբ), ճաշից հետո շնորհակալություն հայտնել մեծերին:

Երկրորդ ենթախմբի սաներին սովորեցնել մեծահասակի օգնությամբ լվանալ ձեռքերը ուտելուց առաջ և հետո, օգտվել անձնական հիգիենայի պարագաներից (օրինակ՝ անձնական սրբիչից): Շարունակել սովորեցնել ուտելուց հետո շնորհակալություն հայտնել և տեղից վեր կենալիս աթոռը տեղը հրել:

1 տարեկան 7 ամսական երեխան պետք է կարողանա մեծահասակի օգնությամբ հանել և հագնել հագուստը (գլխարկը, քուղերը արձակած կոշիկները, կիսատաբատը և զուգագուլպաները):

2 տարեկանում արդեն երեխան պետք է կարողանա մեծահասակի հսկողությամբ կատարել առանձին գործողություններ՝ հանել ու որոշակի հերթականությամբ հագնել հագուստն ու կոշիկները:

**Սաներին սովորեցնել լինել կոկիկ:** Մինչև 2 տարեկանը սանը պետք է կարողանա մեծահասակի օգնությամբ օգտվել թաշկինակից, խնամքով վերաբերվել անձնական իրերին, խաղալիքներին, ուշադրություն դարձնել և կարգի բերել արտաքին տեսքը, հարդարել մազերը, կոկիկ ծալել հագուստը, կոշիկները տեղը դնել: Երեխաներին աստիճանաբար սովորեցնել խմբի կանոններին:

Սովորեցնել հասկացնել (1 տարեկան 7 ամսականից մինչև 2 տարեկանը) սեփական կարիքների մասին: Ձևավորել անձնական հիգիենայի և ինքնասպասարկման տարրական վարք. ձեռքերը, բերանը մաքուր պահելու, լվանալու ցանկություն, սանրվելու, սրբիչով սրբվելու, գլխարկը, վերնահագուստը հանելու կարողություն: Երեխան 2 տարեկանում արդեն պետք է կարողանա մեծահասակի օգնությամբ կատարել սեփական կարիքները հոգալու գործողությունները, կատարել ինքնասպասարկման պարզ գործողություններ:

**Կողմնորոշումը շրջակա միջավայրում:** Սովորեցնել ազատ քայլել և շարժվել խմբասենյակում (ընդունարան, ննջասենյակ), հասկանալ այդ սենյակների օգտագործման նպատակը, հիշել անձնական իրերի պահման վայրերը, սեղանի մոտ իր տեղը և մահճակալը: Դաստիարակել անձանոթ միջավայրում և անձանոթ մարդկանց հետ զգուշավոր վարքագիծ սովորեցնել լսել և ընկալել մեծահասակի արգելող արտահայտությունները:

### **Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտի զարգացման և կրթական վերջնարդյունքները.**

Ա. Սանը մեծահասակի ուղղորդմամբ դրսևորում է ինքնասպասարկման որոշ կարողություններ.

- ✓ Փորձում է ինքնուրույն ուտել,
- ✓ Ինքնուրույն խմելու փորձեր է անում,
- ✓ Փորձում է ինքնուրույն հանվել և հագնվել,
- ✓ Կատարում է ինքնասպասարկման պարզագույն գործողություններ /սրբիչով սրբվել, մազերը սանրել, հանել հեշտ հանվող հագուստը, և այլ:/

Բ. Կատարում է հիգենիկ պարզ գործողություններ.

- ✓ Ճանաչում է հիգենայի որոշ պարագաներ,
- ✓ Մեծահասակի օգնությամբ հետևում է հիգենայի և անվտանգության կանոններին, լվանում է ձեռքերը, մաքրում է ատամները,
- ✓ Մեծահասակի օգնությամբ դադարեցնում է վտանգավոր գործողությունը,

Գ. Փորձում է խուսափել իր կենսական փորձից բխող վտանգներից.

- ✓ Չգուշություն է դրսևորում անձանոթ իրավիճակներում (անձանոթ մարդիկ, երևույթներ):

## ՉԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋՎԱՎՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՎԱՆՁՆԵՐԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում 1-ից մինչև 2 տարեկան սաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝ խմբասենյակում պետք է լինեն.

- ✓ խաղային պարագաներ երեխաների ճանաչողական զարգացման համար՝ խճանկար, «մատրյոշկա» տիկնիկներ, բուրգ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, բազմագույն խորանարդիկներ, գնդակներ, փոքրիկ մեքենաներ, գրքեր գունեղ նկարներով,
- ✓ երեխաների սյուժետային խաղերի համար նյութեր. տիկնիկներ, տարբեր չափերի կենդանիներ, տիկնիկների հագուստ, խաղալիք կահույք, տարբեր ձևերի և գույների կառուցողական նյութեր, խաղալիք-հեռախոսներ, խորանարդիկներ, փայտիկներ և այլն,
- ✓ խաղային նյութեր և սարքավորումներ՝ երեխաների երաժշտական ունակությունների զարգացման համար,
- ✓ խաղալիքներ՝ զբոսանքների ժամանակ խաղալու համար. փոքրիկ դուլեր, կաղապարներ, բահեր և այլն,
- ✓ խաղեր և սարքավորումներ՝ քայլքի և այլ շարժումների համար,
- ✓ երեխաների համատեղ խաղերի համար առանձնացված հատված,
- ✓ դիդակտիկ նյութեր՝ երեխաների զգայարանների, մանր մկանների համակարգի և առարկայական խաղերի զարգացման համար,
- ✓ խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված են պայմաններ շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ):
- ✓ Տարածքը զարդարված է գունեղ նկարներով, ծաղիկներով, բույսերով:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, Երևան 2020թ.
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, Երևան 2021 թ.
3. «Նախադպրոցական կրթություն և զարգացում» Սեյվ դը չիլդրեն, Երևան 2013թ.
4. Ս. Մարության, Ա դալլաքյան «Ն/դ մանկավարժություն» Երևան 2008 թ.
5. Ա. Լուսինյան, Կ. Ղազարյան, Երաժշտությունը մանկապարտեզում 2009թ.
6. Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի կրթական համալիր ծրագիր, Երևան 2012թ.
7. Ժ. Ավետիսյան, Կերպարվեստ / սովորում ենք աշխատել /, Երևան 2020 թ.
8. Լ. Պողոսյան «Եկեք երգենք ու խաղանք», Երևան 1997թ.
9. Կ. Ղազարյան «Երաժշտադիդակտիկ խաղեր», Երևան 2007թ.
10. Ռ. Առաքելյան «Շարժախաղեր», Երևան 2009թ.
11. М. М. Алексеева и др., Методика развития и обучения родному языку дошкольников, Москва, 2000 г.
12. Программа « Истоки » Москва, 2003 г.
13. М. А. Васильева и др., Программа воспитания и обучения в детском саду, Москва, 2008г.
14. М. А. Васильева, В. В. Гербова Программа обучения в детском саду, Москва, 2011г.
15. В. В. Гербова. «Развитие речи в детском саду», Москва 2010 г.
16. Л. С. Выготский Проблема возрастной периодизации детского развития. — Вопросы психологии. -Москва, 1972. -С. 114 - 123.
17. Д. Б. Эльконин Избранные психологические труды. - Москва: Педагогика, 1989.
18. О. А. Карабанова Возрастная психология. - Москва: Айрис-Пресс, 2005.
19. М. И. Лисина Проблемы онтогенеза общения. - Москва, 1986.
20. Дошольное воспитание 2010/1
21. Дошольное воспитание 2011/12
22. Дошольное воспитание 2016/4
23. Дошольное воспитание 2016/6
24. Дошольное воспитание »: